



«02» հունվարի 2015թ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 129-Ղ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի երրորդ մասերով, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1294-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով քաղաքաշինության բնագավառի գործունեությունների տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 26-ի եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել լիցենզիա Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեությունների տեսակներով զբաղվելու համար լիցենզավորվող 19 իրավաբանական անձանց թվով 24 լիցենզիա և 27 ներդիր (համաձայն հավելված 1-ի):
2. Համարել կասեցված տարեկան պետական տուրքը չվճարած լիցենզիավորված 50 իրավաբանական անձանց 80 ներդիրների գործողությունը մինչև տարեկան պետական տուրքը և ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տարեկան պետական տուրքի 0.15 տոկոսի չափով հաշվարկված տույժը վճարելը (համաձայն հավելված 2-ի):
3. «Լիցենզավորման կենտրոն» գործակալության պետ՝ Բաղդասար Սնգրյանին
 - 1) <<Պետական տուրքի մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ լիցենզավորված անձանց, լիցենզիան հանձնել համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

2) Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում հրապարակման համար ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն:

Նախարար՝

Նարեկ Սարգսյան

Իսկականի հետ ճիշտ է

